

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՎՈԼՈԴՅԱՅԻ

**ՀԱՅՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽԵՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.04 - <<Դատական իրավունք դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն>> մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Երևան - 2023

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

САРГСЯН ЛУСИНЕ ВОЛОДЯЕВНА

**АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ОБЕСПЕЧЕНИЯ ИСКА В ГРАЖДАНСКОМ
ПРОЦЕССУАЛЬНОМ ПРАВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.004 - <<Судебное право, судопроизводство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности>>

ЕРЕВАН-2023

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա. Հ. Դավթյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր **Վ. Վ. Հովհաննիսյան**

իրավաբանական գիտությունների

թեկնածու, դոցենտ **Յ. Վ. Հայրապետյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. հունիսի 6-ին ժամը 15.00-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք.Երևան, Հ.Էմինի 123): Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2023 թվականի ապրիլի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

իրավաբանական գիտությունների թեկնածու  **Ջ. Հ. Հայրապետյան**

Тема диссертации была утверждена в Российско-Армянском университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **А.Г. Давтян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **В.В. Оганисян**
кандидат юридических наук, доцент **Ю.В. Айрапетян**


Ведущая организация: Образовательный комплекс полиции РА

Защита состоится 6 июня 2023 г. в 15.00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051 г..Ереван, О.Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 26 апреля 2023 года.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук

 **Дж. А. Айрапетян**

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիների սոցիալ-տնտեսական զարգացմանը համահունչ կարևորվում է անձանց խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության խնդիրը: Դատական պաշտպանությունը հանդիսանում է սահմանադրորեն ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկը: Դատական համակարգի արդյունավետ գործունեության ամենակարևոր պայմաններից մեկն էլ օրինական դատական ակտերի կայացումն է, որը պարտադիր է կատարման համար ՀՀ ողջ տարածքում: Հետևաբար, դատական ակտերի կատարման ապահովող հայցի ապահովման ինստիտուտը, որի կարգավորմանն է ուղղված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քաղ. դատ. օր.) 13-րդ գլխի, հանդիսանում է քաղաքացիական դատավարության արդիական թեմաներից մեկը:

Հայցի ապահովման ինստիտուտի նպատակն է քաղաքացիների և իրավաբանական անձանց գույքային իրավունքների ամբողջական վերականգնումը և կայացվելիք դատական ակտի փաստացի կատարման երաշխավորումը:

ՀՀ դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս դատարանների կողմից հայցի ապահովման կիրառման հարցում միատեսակ մոտեցման բացակայությունը, ինչը կապված է նաև օրենսդրությունում առկա բացերի հետ: Մասնավորապես, բացակայում են հայցի ապահովման կիրառման հստակ չափորոշիչներ, ինչը հիմք է հանդիսանում միևնույն փաստական հանգամանքներով քաղաքացիական գործերի շրջանակներում իրար հակասող որոշումներ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը բազմիցս ենթարկվել է փոփոխությունների և լրացումների, որոնք շարունակվում են մինչ այժմ: ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգիրքը, որն ուժի մեջ մտավ 09.04.2018 թվականին, դրական փոփոխությունների ենթարկեց նաև հայցի ապահովման ինստիտուտին վերաբերող նորմերը, սակայն այդ փոփոխություններն ևս ամբողջական չեն և չեն լուծել բոլոր նախկինում գոյություն ունեցող խնդրահարույց հարցերը: Այդ պատճառով կարևոր է հայցի ապահովման ինստիտուտի գիտապրակտիկ ուսումնասիրությունը:

Թեմայի արդիականությունը և տեսապրակտիկ հետազոտման հրատապությունը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

1. Հայաստանի Հանրապետությունում մինչ այսօր առկա չէ գիտահետազոտական աշխատանք, նվիրված հայցի ապահովման ինստիտուտին: Տեսականորեն

քավարար ուսումնասիրված չեն հայցի ապահովման կիրառման իրավական հիմքերը, դրանց ապացուցման առանձնահատկությունները, հակընդդեմ ապահովման, հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցման և այլ հարցերը:

2. Իրավակիրառ պրակտիկայում ակնհայտ է հայցի ապահովման ինստիտուտի կիրառման հիմնահարցերում միասնական մոտեցումների բացակայությունը, ինչն իր հերթին թելադրում է օրենսդրական բարելավումների անհրաժեշտություն:

Հայցի ապահովման ինստիտուտի խնդիրների ուսումնասիրությունը կնպաստի ՀՀ քաղաքացիական դատավարության 13-րդ գլխի ճիշտ կիրառմանը գործնականում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն առենախոսության նպատակն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարությունում հայցի ապահովման ինստիտուտին վերաբերող տեսապրակտիկ խնդիրների ուսումնասիրությունը:

Վերը նշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

- վերլուծել «հայցի ապահովում» տերմինը,
- բացահայտել հայցի ապահովման ինստիտուտի նպատակներն և առարկան,
- ուսումնասիրել հայցի ապահովման միջոցների կիրառման և կատարման ընթացակարգերը,
- ուսումնասիրել հայցի ապահովման մեկ միջոցը այլ միջոցով փոխարինելու կամ ձևափոխելու և վերացնելու հարցերը,
- բացահայտել քաղաքացիական դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության եղանակները՝ իրենց դեմ հայցի ապահովման միջոցներ կիրառելիս,
- բացահայտել նախնական հայցի ապահովման միջոցների բովանդակությունը քաղաքացիական դատավարությունում,
- վերլուծել և դասակարգել հայցի ապահովման միջոցների տարբեր տեսակները քաղաքացիական դատավարությունում,
- կատարել հայցի ապահովման տարբեր միջոցների կիրառման առանձնահատկությունների վերլուծություն,
- պարզել գործող օրենսդրության թերությունները, որոնք խոչընդոտում են քաղաքացիական դատավարությունում հայցի ապահովման ինստիտուտի ճիշտ կիրառմանը և ձևակերպել առաջարկներ քաղաքացիական դատավարությունում հայցի ապահովման ինստիտուտի կատարելագործման համար:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հայցի ապահովման ինստիտուտի առանձին հիմնախնդիրները հետազոտության են ենթարկվել մի շարք դատավարագետների կողմից:

Սույն հետազոտության տեսական հիմք են հանդիսացել մի շարք դատավարագետների աշխատանքներ, մասնավորապես՝ Ի.Ի. Տկաչևայի, Վ.Տ. Նովիչկովայի, Օ.Յու. Վոլչենկոյի, Ա.Ի. Ջայցելի, Տ.Բ. Յուսուպովի, Մ.Ա. Տիմոնովի, Ա. Դավթյանի, Ա. Մեդրյանի, Մ. Շաքարյանի, Գ. Սաֆարյանի, Վ.Վ. Կոտլյարովայի, Յա.Ա.

Լվրվի, Մ.Վ. Տետյուխինի, Վ.Վ. Յարկովի, Ն.Ա. Չուլինովսկայի, Ա.Ի. Շուկինի, Ն. Վ. Կոժենկինովայի, Ա.Ն. Կոստենկոյի, Տ.Վ. Ժուկովայի, Ա.Յա. Կլեյմենովի, Վ.Ա. Անոխինի, Մ.Ա. Ֆալկովիչի, Ն.Վ. Պավլովայի, Դ. Յա. Մալեչինի, Ի. Ս. Դենիսովի, Վ.Հովհաննիսյանի, Վ. Դալլաքյանի, Ա.Մեդրյանի, Դ. Բ. Աբուշենկոյի և այլոց աշխատանքները:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Սույն ուսումնասիրության համար նորմատիվ հիմք են հանդիսացել հայցի ապահովմանը առնչվող ՀՀ իրավական ակտերը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, քաղաքացիական օրենսգիրքը, ընտանեկան օրենսգիրքը և մի շարք այլ օրենքներ, այդ թվում՝ իրավական ուժը կորցրած իրավական ակտեր: Հետազոտության կատարման համար օգտագործվել են նաև մի շարք արտասահմանյան պետությունների օրենսդրական ակտեր և միջազգային իրավական փաստաթղթեր:

Հետազոտության փորձառական (էմպիրիկ) հիմքերը: Ատենախոսության էմպիրիկ հիմքը կազմում են մի շարք նյութեր, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ ընդհանուր իրավասության, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների վճիռներ և որոշումներ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ արդարադատության խորհրդի, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշումներ, օտարերկրյա պետությունների դատական ակտեր և այլ դատական պրակտիկայի նյութեր:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտն է հայցի ապահովման միջոցների կիրառման արդյունքում առաջացած իրավահարաբերությունները, ինչպես նաև նշված իրավաբանական ինստիտուտի կիրառումը կարգավորող քաղաքացիադատավարական իրավունքի նորմերը:

Ատենախոսության ուսումնասիրության առարկան դատարանում գործին մասնակցող անձանց կողմից հայցի ապահովման միջոցների կիրառման իրավունքի իրացման խնդիրներն են:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսությունը պատրաստվել է տարբեր մեթոդների կիրառմամբ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ ընդհանուր և հատուկ: Ընդհանուրը ներառում է իր մեջ գիտական ուսումնասիրության դիալեկտիկական մեթոդը, որպես իրականության օբյեկտիվ և համակողմանի իմացության հիմնական եղանակ, ինչպես նաև պատմական, տրամաբանական, անալիզի և սինթեզի, դեդուկցիայի և ինդուկցիայի, համակարգային վերլուծության մեթոդները: Հատուկ մեթոդներից առավել լայնորեն կիրառվել է համեմատաիրավական, ինչպես նաև պատմա-իրավական, ձևական-իրավաբանական, իրավական մոդելավորման, իրավական նորմերի մեկնաբանման, համակարգային կառուցվածքային վերլուծության և այլ գիտական մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունը հայրենական իրավագիտության առաջին ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել բազմակողմանի ուսումնասիրել և

վերլուծել հայցի ապահովման ինստիտուտին վերաբերող տեսական և գործնական հիմնախնդիրները: Ընտրված թեմայի գիտական նորույթը կայանում է հայցի ապահովման ինստիտուտը բնութագրող հիմնարար դրույթների պարզաբանման և դրա հիման վրա այս ոլորտի օրենսդրական կարգավորումների բարելավմանն ուղղված առաջարկներ կատարելու մեջ: Հայցի ապահովման ինստիտուտի վերաբերյալ տեսական մակարդակով կատարված ուսումնասիրությունը, ինչպես նաև հայցի ապահովման միջոցների կիրառման դատական պրակտիկայի վերլուծությունը, հնարավորություն տվեց բացահայտել այս ոլորտում առկա հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման տարբերակներ:

Առենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և եզրակացության մեջ ամփոփված առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Ուսումնասիրելով հայցի ապահովման ինստիտուտի առանձնահատկությունները ՀՀ քաղաքացիական դատավարությունում, հարկ ենք համարում տալ հայցի ապահովման օրենսդրական սահմանումը և առաջարկում ենք ՀՀ քաղ. դատ. օր.-ում նախատեսել հայցի ապահովման հասկացությունը սահմանող հոդված հետևյալ բովանդակությամբ. հոդված 128 (Հայցի ապահովման հասկացությունը և հայցի ապահովման կիրառման հիմքերը) <<Հայցի ապահովումը գործին մասնակցող անձի կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի նախաձեռնությամբ կիրառվող օրենքով նախատեսված դատավարական միջոց կամ միջոցների համակցություն է, որի նպատակն է ապահովել գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտի կատարումը>>:

2. Հայցի ապահովման ինստիտուտի պատմական վերլուծության արդյունքում, գտնում ենք, որ միջնադարում (XI-XII –րդ դարեր) հայ իրավունքին արդեն հայտնի էր հայցի ապահովման իրավունքի գաղափարը: Մասնավորապես՝ Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը (125-131-րդ հոդվածներ <<Գրավ և ինչքի իրավունք>>) տալիս էր մանրամասն կարգավորումներ գրավի վերաբերյալ: Ի տարբերություն Մխիթար Գոշի Դատաստանագրքի, որտեղ գրավառուն հանդիսանում էր միայն գրավ վերցված գույքի պահառու, Սմբատ Սպարապետի <<Դատաստանագրք>>-ով գրավառուին իրավունք էր վերապահված, մինչև պարտքի լրիվ մարումը, օգտագործել գրավի առարկան՝ ստանալով դրանից օգուտներ կամ պտուղներ: Կարելի է եզրակացնել, որ այս դատաստանագրքով նախատեսված գրավը, ըստ էության, իրենից ներկայացնում է, իրավական առումով, մոտավորապես հայցի ապահովման միջոցներից կիրառվող *արգելանքի* դատավարական հասկացությունը, քանի որ գրավ՝ պարտավորության դիմաց, անձը կարող էր վերցնել միմիայն դատարանի որոշմամբ, ինչով և ապահովվում էր իր պարտավորության, ինչպես նաև վերջնական դատարանի որոշման կատարումը:

3. Քննարկելով հայցի ապահովման իրավական բնույթը և հատկանիշները, հեղինակը հնարավոր է գտնում հայցի ապահովման միջոցների կիրառումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ցանկացած

վարույթի շրջանակներում: <Երևաբար առաջարկում ենք ՀՀ քաղ. դատ. օր.-ի <<հայցի ապահովում>> գլուխը շարադրել ոչ թե ՀՀ քաղ. դատ. օր.-ի երկրորդ բաժնի առաջին ենթաբաժնում (հայցային վարույթ), այլ Ընդհանուր դրույթներին նվիրված առաջին բաժնում: Նույն պատճառաբանությամբ առաջարկում ենք փոփոխություն կատարել ՀՀ քաղ. դատ. օր. 130-րդ հոդվածում, լրացնելով այն դիմում բառով <<Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը կարող է ներկայացվել դատավարություն ցանկացած փուլում: Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը կարող է շարադրվել հայցադիմումում կամ դիմումում>>:

4. Ուսումնասիրելով հայցի ապահովման իրավական բնույթը հանգել ենք եզրակացության, որ հայցի ապահովման միջնորդություն ներկայացնելու իրավունք անձը պետք է ունենա ոչ միայն առաջին ատյանի դատարանում քննության ժամանակ, այլ նաև վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ օրենսդիրը որոշ դեպքերում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի տարբեր հոդվածներով թույլատրել է հայցի ապահովման կիրառում դատարանի նախաձեռնությամբ, առաջարկում ենք հայցի ապահովումը կարգավորող հիմնական նորմում՝ ՀՀ քաղ. դատ. օր. 128-րդ հոդվածի 1-ին մասում փոփոխություն կատարել և այն ձևակերպել այսպես. *դատարանը օրենքով սահմանված դեպքերում իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:* Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

5. Դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց տվեց, որ դատարանները պրակտիկայում ցուցաբերում են տարբեր մոտեցումներ հայցի ապահովման միջնորդությունների բավարարման կամ մերժման հարցերում: Գտնում ենք, որ դատարանը հայցի ապահովման միջնորդություն քննարկելիս պետք է գնահատի արդյոք առկա են հայցի ապահովման կիրառման համար անհրաժեշտ նախապայմանները, որոնք առաջարկում ենք համարել հետևյալ հինգը՝ 1. *դիմողի իրավասությունը հայցի ապահովման միջնորդությամբ հանդես գալու համար, 2. հայցի ապահովման կիրառման համար անհրաժեշտ իրավական հիմքերի առկայությունը, 3. իրավական հիմքերի առկայության ապացուցումը, 4. հայցի ապահովման միջոցների համաչափությունը ներկայացված պահանջին և հայցի ապահովմամբ հերասպնդվող նպատակին, 5. միջնորդություն ներկայացնելու ընթացակարգային կանոնների պահպանումը:* Դատարանը իրավական հիմքերի ապացուցումը գնահատելիս պետք է առաջնորդվի այն անձի *անբարեխղճության կանխավարկածով*, որի հանդեպ կիրառվում են հայցի ապահովման միջոցներ:

6. ՀՀ քաղ. դատ. օր.-ի 131-րդ հոդվածի 4-րդ մասի ուսումնասիրությունից հանգում ենք եզրակացության, որ իրավանորմը ամբողջությամբ չի սահմանում հայցի ապահովման միջնորդության մերժման հիմքերը: Առաջարկում ենք ՀՀ Քաղ. դատ. օր. 131-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել 2-րդ կետով << 2. հայցի ապահովման միջոցը համաչափ չէ ներկայացված պահանջին և /կամ հայցի ապահովմամբ հետապնդվող նպատակին>>:

7. Հետազոտելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 133-րդ հոդվածի 2-րդ մասը, հանգում ենք եզրակացության, որ նշված կարգավորումը վտանգ է պարունակում գործով կայացվելիք վերջնական դատական ակտի փաստացի կատարման համար, քանի որ հայցի ապահովման մեկ միջոցի փոխարինումը մյուսով դատական նիստի շրջանակներում քննարկելը նպատակահարմար է միայն այն դեպքում, երբ այդ դիմումը ներկայացրել է այն անձը, որի հանդեպ կիրառվել է հայցի ապահովման միջոցը: Ուստի, առաջարկում ենք փոփոխություն կատարել ՀՀ քաղ. դատ. օր.-ի 133-րդ հոդվածի 2-րդ մասում և այն շարադրել հետևյալ կերպ. <<Հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու հարցը լուծվում է սույն օրենսգրքի ՀՀ 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով առանց դատական նիստ հրավիրելու, բացառությամբ, երբ նման միջնորդություն է ներկայացրել գործին մասնակցող անձը, որի դեմ կիրառվել են հայցի ապահովման միջոցներ: Գործին մասնակցող անձի, որի դեմ կիրառվել են հայցի ապահովման միջոցներ, միջնորդությունը հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու վերաբերյալ, քննվում է սույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով>>:

8. Ուսումնասիրելով հակընդդեմ ապահովման հասկացությունը և իրավական բնույթը հեղինակի կողմից սահմանվել է հակընդդեմ ապահովման դատավարական գործառույթները: Հակընդդեմ ապահովումը որպես գործին մասնակցող անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոց կատարում է երկու կարևոր գործառույթ: Առաջին գործառույթը պաշտպանիչ է, ինչը արտահայտվում է նրանով, որ հակընդդեմ ապահովումը ուղղված է պաշտպանելու այն անձի իրավունքները, որի դեմ կիրառված է հայցի ապահովման միջոցը: Երկրորդ գործառույթը կարելի է սահմանել որպես կանխարգելիչ, ինչը արտահայտվում է նրանով, որ հակընդդեմ ապահովումը խոչնդոտ է հանդիսանում անհիմն հայցի ապահովման միջնորդություններ ներկայացնելու համար:

9. Իրականացնելով հակընդդեմ ապահովմանը նվիրված ՀՀ քաղ. դատ. օր.-ի 135-րդ հոդվածի ուսումնասիրություն, եկել ենք եզրահանգման, որ <<հնարավոր վնասներ>> հասկացությունը կարող է պատճառ հանդիսանալ դատական պրակտիկայում տարակարծությունների համար, ինչից խուսափելու նպատակով անհրաժեշտ ենք համարում օրենսդրորեն ամրագրել հակընդդեմ ապահովման գումարի չափի սահմանման չափորոշիչներ: Դատական պրակտիկայի միասնականությունը ապահովելու նպատակով, առաջարկում ենք ՀՀ քաղ. դատ. օր. 135-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ նախադասությամբ՝ <<հակընդդեմ

ապահովման չափը որոշելիս դատարանը գնահատում է հայցի ապահովմամբ պատճառավոր հնարավոր վնասների չափը, որը չի կարող պակաս լինել հայցագնի կեսից, իսկ ոչ գույքային պահանջներով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից>>:

10. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհիմն հայցի ապահովում կիրառելու հետևանքներից մեկը կարող է դառնալ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման վերաբերյալ հայց ներկայացնելը, գտնում ենք, որ դատավարության մասնակիցները առանձնահատուկ զգուշություն պետք է դրսևորեն այս դատավարական ինստիտուտի կիրառման հարցում և պետք է յուրաքանչյուր դեպքում գնահատեն իրենց ռիսկերը կապված հայցի ապահովմամբ պատճառված վնասների հետագա փոխհատուցման հարցում: Ուստի առաջարկում ենք հայցի ապահովման միջնորդություն ներկայացնելու իրավունքը ամրագրել որպես ներկայացուցիչների հատուկ լիազորություն, որի մասին պետք է ուղիղ նշում կատարված լինի լիազորագրում: Այս կապակցությամբ առաջարկում ենք ՀՀ քաղ. դատ. օր.-ի 56-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 13-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ *դատարանում գործը վարելու լիազորագիրը ներկայացուցչին իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարելու ցանկացած դատավարական գործողություն, բացառությամբ 13. հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու:*

11. Իրականացնելով ՀՀ քաղ. դատ.օր.-ի 138-րդ հոդվածի ուսումնասիրություն, հանգում ենք եզրակացության, որ օրենսդիրը հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավունքի առաջացման համար պարտադիր է համարում դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը, որով հայցը մերժվել է, թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է: Գտնում ենք, որ այս դրույթը սահմանափակում է վնասներ կրած անձի իրավունքը ստանալ փոխհատուցում այն դեպքերում, երբ հայցի ապահովումը կիրառվել է անհիմն, սակայն չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որով հայցը մերժվել է կամ թողնվել է առանց քննության կամ կարճվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված հիմքերով: Օրինակ՝ եթե հայցի ապահովման միջոցները վերացել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, այն է եթե բացակայում են հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը, հայցի ապահովման ընթացքում անձը կրել է ֆինանսական կորուստներ, ապա ըստ գործող օրենսդրության այն ենթակա կլինի հատուցման միայն այն դեպքում երբ հայցը մերժվի կամ կարճվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված հիմքերով: Անհրաժեշտ ենք համարում փոփոխություն կատարել ՀՀ Քաղ. դատ. օր. 138-րդ հոդվածի 1-ին մասի մեջ և հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավական հիմքերը լրացնել հետևյալ կերպ՝ <<Գործին մասնակցող անձը կամ այլ անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու

նույն դատարան՝ ընդդեմ հայցի ապահովման միջոց պահանջած գործին մասնակցող անձի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ներկայացված հայցը մասնակի կամ ամբողջությամբ մերժվել է, թողնվել է առանց քննության, գործի վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքով կամ *հայցի ապահովման միջոցը վերացվել է սույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով*>>:

12. Ուսումնասիրելով հայցի նախնական ապահովման միջոցների հասկացությունը, ինչպես նաև օրենսդրական կարգավորումները, գալիս ենք եզրակացության, որ ՀՀ քաղ. դատ. օր-ի 134-րդ հոդվածով սահմանված հայցի նախնական ապահովման միջոցներ ներկայացնելու դիմումի պահանջները թերի են: Ուստի առաջարկում ենք, 137-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել և ձևակերպել հետևյալ կերպ. *հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները. 1) դատարանի անվանումը, որտեղ ներկայացվում է դիմումը. 2) դիմողի անունը (անվանումը), հաշվառման (գրանվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գրանվելու) վայրի հասցեից), դիմող քաղաքացու անձնագրային տվյալները, դիմող իրավաբանական անձի պետական գրանցման համարը, նրա ներկայացուցչի անունը, անձնագրային տվյալները, իսկ եթե հայցը ներկայացրել է դրա իրավունքն ունեցող պաշտոնավար անձը՝ նաև այդ անձի անունը, պաշտոնը. 3) պարտապանի անունը (անվանումը), հաշվառման (գրանվելու) վայրի հասցեն. 4) հարուցվելիք հայցի առարկան, որի կապակցությամբ պետք է կիրառվի հայցի նախնական ապահովում. 5) տվյալ պահին հայցադիմում ներկայացնելու անհնարինության մասին հիմնավորումներ. 6) տեղեկություններ՝ դիմումում որպես պարտապան նշված անձի նկատմամբ դիմողի պահանջի հիմքերի վերաբերյալ. 7) հիմնավորումներ՝ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման իրավական նպատակի մասին 8) հիմնավորումներ՝ հայցի նախնական ապահովման միջոցի անհապաղ ընդունման մասին. 9) նշում՝ հայցի ապահովման միջոցի մասին 10) դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:*

13. Վեր հանելով հայցի ապահովման որոշումների բողոքարկման խնդիրը գտնում ենք, որ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությունը, մի կողմից, առաջին անգամ նախատեսելով հայցի ապահովման որոշումների բողոքարկման հնարավորություն, այնուամենայնիվ, չի տվել այս հարցի լուծմանն ուղղված ամբողջական և լիարժեք օրենսդրական կարգավորումներ: Տվյալ պնդման համար հիմք է հանդիսանում հայցի ապահովման հետ կապված որոշակի որոշումների նկատմամբ վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավական հնարավորության բացակայությունը: Այսպես, կարող ենք փաստել, որ համաձայն ՀՀ քաղ. դատ. օր-ի կարգավորումների, բողոքարկման ենթակա չէ հակընդդեմ ապահովում կիրառելու, հայցի ապահովման վերացման մերժման, հայցի ապահովման մեկ միջոցի փոխարինումը մեկ այլ միջոցով կամ ձևափոխումը

թույլատրող կամ մերժող դատարանի որոշումների դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքը: Համեմատության համար, նշենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսում է հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու որոշման դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք: Դատավարության կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների կենսագործման անհրաժեշտությունից ելնելով, նապատակահարմար ենք գտնում նաև մեր կողմից նշված դատական որոշումների բողոքարկման իրավունք նախատեսելը: Այդ իսկ պատճառով, գտնում ենք, որ ՀՀ քաղ. դատ. օր-ի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը անհրաժեշտ է լրացնել հակընդեմ ապահովում կիրառելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու միջնորդությունը բավարարելու կամ մերժելու որոշումների դեմ վերաքննության կարգով բողոք բերելու իրավունքով: ՀՀ քաղաքացիական դատավարության 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը առաջարկում ենք ձևակերպել այսպես. 1. *Վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա առաջին ափսոսանքի դատարանի հեփկյալ որոշումները՝ 3) հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու, հակընդեմ ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու կամ մերժելու, հայցի ապահովումը վերացնելու կամ վերացնելը մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու մասին միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին որոշումները:*

14. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հայցի ապահովման միջոցները, որոնք վեցն են, սակայն այդ ցանկը սպառիչ չէ: Նշված հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված է պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը, իսկ 3-րդ կետով այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը որպես հայցի ապահովման միջոցներ: Գտնում ենք, որ նշված հայցի ապահովման միջոցները խելամիտ կլինի միացնել, քանի որ, ըստ էության, երկուսն էլ նույն հայցի ապահովման միջոցն են, միակ տարբերությունը, որը կարելի է նկատել գործող հոդվածի կարգավորումից այն է, որ պատասխանողի պարագայում ուղղակի նշված է որոշակի գործողությունների կատարման արգելք, իսկ այլ անձանց համար՝ միայն վեճի առարկային վերաբերող գործողությունների կատարման արգելք: Բացի այդ, առաջարկում ենք *հանել* հայցի ապահովման միջոցներից նույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ *գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում՝ գույքի իրացման կասեցումը*: Գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելուց՝ գույքի իրացումը կասեցվում է <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ կետի ուժով, համաձայն որի հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, եթե հայց է ներկայացվել դատարան այն գույքն արգելանքից հանելու մասին, որի վրա բռնագանձում է տարածվել կատարողական թերթով: Փոխարենը առաջարկում ենք հոդվածը լրացնել հետևյալ հայցի

ապահովման միջոցով՝ վիճելի գույքը հայցվորին կամ այլ անձի պահապնության հանձնելը (դատական սեկվեսոր): Այս հայցի ապահովման միջոցի նախատեսումը հնարավորություն կտա առավելագույնս երաշխավորել այն դատական ակտերի կատարումը, որոնք ընդունվել են շարժական գույքի վեճերից բխող քաղաքացիական գործերից: Այսպիսով, հաշվի առնելով վերը նշված փոփոխությունների առաջարկները գտնում ենք, որ << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասը պետք է շարադրել հետևյալ կերպ՝ *հայցի ապահովման միջոցներն են՝* 1) պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելը. 2) պատասխանողին և այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը. 3) պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելը. 4) վիճելի գույքը հայցվորի կամ այլ անձի պահատվության հանձնելը. 5) պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը. 6) օրենքով նախատեսված հայցի ապահովման այլ միջոցներ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը.

Ատենախոսության մեջ ձևակերպված եզրակացություններն ու առաջարկությունները թույլ կտան լուծել քաղաքացիական դատավարագիտության տեսության մի շարք չբացահայտված կամ քիչ ուսումնասիրված հարցեր, մասնավորապես՝ հայցի ապահովման միջոցների իրավական բնույթի, առարկայի, դասակարգման չափանիշների, կիրառման հիմքերի և այլնի վերաբերյալ:

Սույն ուսումնասիրության **գործնական նշանակությունը** կայանում է հայցի ապահովմանը վերաբերող << քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները կատարելագործելու, ինչպես նաև միատեսակ դատական պրակտիկայի ձևավորմանն ուղղված առաջարկներ կատարելու մեջ: Ատենախոսության հիմնական դրույթները կարելի է օգտագործել քաղաքացիական դատավարություն առարկայի դասախոսությունների, սեմինարների և այլ կրթական միջոցառումներ անցկացնելիս:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը քննարկվել և գրախոսվել է Հայ-Ռուսական Սլավոնական համալսարանի քաղաքացիական իրավունքի և դատավարության ամբիոնում: Ատենախոսության մեջ պարունակվող հիմնական դրույթներն ու տեսական եզրակացությունները քննարկվել են Հայ-Ռուսական Սլավոնական համալսարանում 2014-2021 թթ. անցկացվող գիտաժողովներում: Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր գիտական ամսագրերում և ժողովածուներում: Ուսումնասիրության արդյունքում կազմված <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> << օրենքի նախագիծը ուղարկվել է << Ազգային ժողովի

պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով՝ ըստ նպատակահարմարության օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու համար:
Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, տասնմեկ պարագրաֆից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացվում են դրա մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակները և խնդիրները, տեսական, մեթոդաբանական, նորմատիվ և փորձառական հիմքերը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, սահմանվում է ատենախոսության գիտական նորույթը և ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Ներածության մեջ շարադրված են նաև հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, դրա արդյունքների փորձարկումները:

Առաջին գլուխը վերնագրված է <<Հայցի ապահովման իրավական բնույթը>> և բաղկացած է 2 պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին <<Հայցի ապահովման ինստիտուտի իրավական կարգավորումը և նշանակությունը դատավարագիտության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ>> վերտառության պարագրաֆում ներկայացվել են հայցի ապահովման սահմանումը, հայցի ապահովման ինստիտուտի առարկան և նպատակները:

Նույն պարագրաֆում քննարկվել են հայցի ապահովման կիրառման հնարավորության հարցերը դատավարության տարբեր վարույթների շրջանակներում: Կատարված վերլուծության արդյունքում հեղինակը հնարավոր է գտել հայցի ապահովման կիրառումը ՀՀ քաղ. դատ. օր.-ով նախատեսված ցանկացած վարույթի շրջանակներում, այդ թվում նաև հատուկ վարույթի շրջանակներում: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ հատուկ վարույթի գործերը, ընդհանուր առմամբ, քննվում են հայցային վարույթի գործերի կանոններով և գործին մասնակից կարող են դառնալ տարբեր շահագրգիռ անձինք, ինչի պարագայում, ևս կարող է անհրաժեշտություն առաջանալ գործն ըստ էության լուծող դատական ակտի կատարումը ապահովել:

Այս պարագրաֆի շրջանակներում, անդրադարձ է կատարվել նաև այն հարցին, թե ՀՀ քաղ. դատ. օր.-ով նախատեսված որ դատական ակտերի կատարումն է հնարավոր ապահովել հայցի ապահովմամբ: Ուսումնասիրելով ՀՀ քաղ. դատ. օր.-ով նախատեսված բոլոր դատական ակտերը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցի ապահովման առարկա է սահմանվել գործին մասնակցող անձի դատարան ներկայացված նյութաիրավական պահանջը, որի բավարարման դեպքում այն արտացոլվելու է միայն գործն ըստ էության լուծող դատական ակտի մեջ, հեղինակը

հանգել է եզրակացության, որ ապահովման են ենթակա միայն դատարանի եզրափակիչ վերջնական դատական ակտերը:

Առաջին գլխի երկրորդ <<Հայցի ապահովման ինստիտուտի զարգացման պատմությունը>> վերտառությամբ պարագրաֆում հեղինակը անդրադառնում է հայցի ապահովման ինստիտուտի առաջացման և զարգացման պատմությանը:

Կատարված ուսումնասիրության արդյունքում, հեղինակը արձանագրել է, որ հայցի ապահովումը հայտնի էր դեռևս հռոմեական իրավունքին, լայնորեն կիրառվել է միջին դարերում եվրոպական մի շարք պետություններում (Միջնադարյան Անգլիայում, Ռուսաստանում և այլն): Հետզհետե հայցի ապահովման ինստիտուտի զարգացման արդյունքում 18-րդ դարում արդեն սկսել են կիրառվել ներկայիս հայցի ապահովման միջոցների նախատիպերը՝ արգելանք, որոշումների կատարման կասեցում, հրապարակային վաճառքի կասեցում և այլն:

Պարագրաֆում ներկայացվել են նաև հայցի ապահովման իրավական կարգավորումների առանձնահատկությունները խորհրդային շրջանում, որոնք կանխորոշված էին հեղափոխական իրավագիտակցությունից բխող օրինականության և այլ սկզբունքներով և պատկերացումներով:

Անդրադառնալով հայ իրավունքի զարգացմանը հեղինակը նկատել է, որ դեռևս Սմբատ Սպարապետի Դատաստանագրքով նախատեսված էր գրավի իրավունք, որն ըստ էության, բովանդակային առումով իրենից ներկայացնում է ներկայիս *գրավի* և որպես հայցի ապահովման միջոց կիրառվող *արգելանքի* միջև ընկած միջանկյալ դատավարական հասկացություն, քանի որ գրավ՝ պարտավորության դիմաց, ի տարբերություն գրավի ներկայումս գործող կարգավորումների, անձը կարող էր վերցնել միմիայն դատարանի որոշմամբ, ինչով և ապահովում էր իր պարտավորության, ինչպես նաև վերջնական դատարանի որոշման կատարումը:

Պարագրաֆում նաև քննարկվել են հայցի ապահովման իրավական կարգավորումների զարգացումը << օրենսդրության մեջ, այն է՝ համեմատվել են 1998 թ. և 2018 թ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի իրավական նորմերը, որի արդյունքում հեղինակը դրական է գնահատել կատարված փոփոխությունները, մասնավորապես՝ հայցի նախնական ապահովման միջոցների ներմուծումը, հայցի ապահովման որոշումների վերաքննության կարգով իրավունքի սահմանումը, հակընդդեմ ապահովման և հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հարցերի ավելի մանրամասն կարգավորումները:

Երկրորդ գլուխը՝ <<Հայցի ապահովման ինստիտուտի կիրառումը ՀՀ քաղաքացիական դատավարությունում>> վերտառությամբ, նվիրված է դատարանների կողմից հայցի ապահովման միջոցների, այդ թվում՝ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման, փոփոխման, վերացման խնդիրներին:

Երկրորդ գլխի <<Հայցի ապահովման կիրառման նախապայմանները և իրավական հիմքերը>> վերտառությամբ առաջին պարագրաֆում հեղինակը ներկայացնում է դատարանների համար հայցի ապահովման կիրառման համար

անհրաժեշտ նախապայմանները՝ վեր հանելով դատական պրակտիկայում հաճախ առաջացող խնդիրները: Մասնավորապես, հեղինակը նշում է, որ հայցի ապահովման կիրառման համար անհրաժեշտ նախապայմանները կարելի է բաժանել երկու խմբի՝ հայցի ապահովման միջնորդությամբ հանդես գալու և հայցի ապահովման միջնորդությունը բավարարելու համար անհրաժեշտ նախապայմանների: Որպես հայցի ապահովման միջնորդությամբ հանդես գալու համար անհրաժեշտ նախապայմաններ հեղինակը առանձնացնում է դիմողի դատավարական իրավունակությունը, դատարանին գործի ընդդատությունը, իսկ միջնորդության բավարարման համար անհրաժեշտ նախապայմանների մեջ ընդգրկում է դիմողի իրավասությունը հայցի ապահովման միջնորդությամբ հանդես գալու համար, հայցի ապահովման կիրառման համար անհրաժեշտ իրավական հիմքերի առկայությունը, այդ հիմքերի առկայության ապացուցումը: Հայցի ապահովման կիրառման համար անհրաժեշտ նախապայմանների թվին է դասում նաև հայցի ապահովման միջնորդություն ներկայացնելու ընթացակարգային կանոնների, ինչպես նաև համաչափության սկզբունքի պահպանումը:

Հայցի ապահովման միջոցներ կիրառելու հարցում հեղինակը առանձնակի ուշադրության է արժանացնում այն հանգամանքը, որ դատարանները պետք է առաջնորդվեն պատասխանողի կամ այլ գործին մասնակցող անձի, որի դեմ կիրառվում են հայցի ապահովման միջոցներ, *անբարեխղճության կանխավարկածով*: Այսինքն, դատարանը պետք է հանգի այն համոզմունքին, որ դիմողի կողմից ներկայացված ապացույցները ավելի շուտ վկայում են հայցի ապահովման միջոցներ կիրառելու անհրաժեշտության մասին, քան հակառակը:

Վերլուծելով հայցի ապահովման կիրառման անհրաժեշտ նախապայմանները, հեղինակը գալիս է եզրակացության, որ հայցի ապահովման միջնորդության մերժման համար հիմք պետք է հանդիսանան հետևյալ հանգամանքները. 1. եթե հայցի ապահովման միջոցի կիրառումը չի ծառայում հայցի ապահովման ինստիտուտի նպատակներին, այսինքն՝ բացակայում են կիրառման հիմքերը, 2. եթե նշված հայցի ապահովման միջոցը չի համապատասխանում (համաչափ չէ) ներկայացված հայցապահանջին: Ըստ գործող օրենսդրության որպես հայցի ապահովման միջնորդության մերժման հիմք նշված է միայն հայցի ապահովման կիրառման իրավական հիմքերի բացակայությունը:

Այս պարագրաֆի շրջանակներում, անդրադառնալով բոլոր վերը թվարկված հայցի ապահովման կիրառման նախապայմաններին առանձին-առանձին, հեղինակը արձանագրում է, որ հայցի ապահովման միջնորդություն կարող է ներկայացնել գործին մասնակցող ցանկացած անձ, այդ թվում նաև երրորդ անձինք, ուստի առաջարկել է ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձանց իրավունքների սահմանափակումներից հանել հայցի ապահովման միջնորդություն ներկայացնելու իրավունքի սահմանափակումը:

Ատենախոսը գտնում է նաև, որ հայցի ապահովման միջնորդություն ներկայացնելու իրավունք անձը պետք է ունենա ոչ միայն առաջին ատյանի

դատարանում գործի քննության ժամանակ, այլ նաև գործի քննության հետագա փուլերում, քանի որ հայցի ապահովման կիրառման իրավական հիմքերը կարող են առաջանալ նաև առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման փուլերում:

Երկրորդ գլխի <<Հայցի ապահովման միջոցի փոփոխումը և վերացումը>> վերտառությամբ երկրորդ պարագրաֆում հեղինակը վերլուծել է հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ ձևափոխելու, ինչպես նաև վերացնելու հարցերը:

Հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ ձևափոխելու հարցում, հեղինակը հատկապես մեծ ուշադրություն է դարձրել ընթացակարգային հարցերին՝ նկատելով, որ հայցի ապահովման մեկ միջոցի փոփոխությունը մյուսով դատական նիստի շրջանակներում՝ գործին մասնակցող անձանց ծանուցմամբ քննարկելը, վտանգ է պարունակում՝ գործով կայացվելիք վերջնական դատական ակտի կատարման համար: Հնարավոր է, որ անձը, որի դեմ կիրառվելու է հայցի ապահովման միջոց, տեղեկանալով վտանգի մասին, մինչև դատարանի կողմից այդ մասին որոշում կայացնելը՝ գործողություններ ձեռնարկի այդ վտանգը կանխելու համար: Հետևաբար, հեղինակը գտել է, որ հայցի ապահովման մեկ միջոցի փոխարինումը մյուսով պետք է կատարվի ոչ թե հայցի ապահովման վերացման համար նախատեսված ընթացակարգով, այսինքն << Քաղ. դատ. օր-ի 134-րդ հոդվածի 3-րդ մասով, այլ հայցի ապահովման միջոցի կիրառման համար նախատեսված << Քաղ. դատ. օր-ի 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով: Հայցի ապահովման մեկ միջոցի փոխարինումը մյուսով դատական նիստի շրջանակներում քննարկելը հեղինակը նպատակահարմար է գտել միայն այն դեպքում, երբ այդպիսի դիմում է ներկայացրել այն անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոցը:

Երկրորդ գլխի <<Հակընդդեմ ապահովումը և հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցումը>> վերտառությամբ պարագրաֆում, հեղինակը ներկայացրել է հակընդդեմ ապահովման, հայցի ապահովման կիրառման հետևանքով առաջացած վնասների հատուցման հարցերը:

Այս պարագրաֆում, հեղինակը անդրադարձել է հակընդդեմ ապահովման չափ սահմանելու չափորոշիչներին և առաջարկել է այդ հարցին տալ օրենսդրական լուծում, այն է սահմանել, որ հակընդդեմ ապահովման գումարի չափը չի կարող պակաս լինել հայցագնի կեսից:

Ատենախոսը ուշադրության արժանի խնդիր է համարել նաև հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավական կարգավորումը: Համաձայն գործող օրենսդրության գործին մասնակցող անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի ապահովման միջոց պահանջած գործին մասնակցող անձի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, եթե դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական

ակտով ներկայացված հայքը մասնակի կամ ամբողջությամբ մերժվել է, թողնվել է առանց քննության, կամ գործի վարույթը կարճվել է օրենսգրքով նախատեսված դեպքերում: Հեղինակի համաձայնաբեր այս դրույթը սահմանափակում է վնասներ կրած անձի իրավունքը ստանալ փոխհատուցում այն դեպքերում, երբ հայցի ապահովումը կիրառվել է անհիմն, սակայն չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որով հայքը մերժվել է կամ թողնվել է առանց քննության կամ կարճվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով

նախատեսված հիմքերով: Օրինակ՝ եթե հայցի ապահովման միջոցները վերացել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, այն է եթե բացակայում են հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը, հայցի ապահովման ընթացքում անձը կրել է ֆինանսական կորուստներ, ապա ըստ գործող օրենսդրության այն ենթակա կլինի հատուցման միայն այն դեպքում երբ հայքը մերժվի կամ կարճվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված հիմքերով: Հետևաբար, անհրաժեշտ է փոփոխություն կատարել գործող օրենսդրության մեջ և հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավական հիմքերը լրացնել հետևյալ կերպ՝ «Գործին մասնակցող անձը կամ այլ անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի ապահովման միջոց պահանջած գործին մասնակցող անձի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ներկայացված հայքը մասնակի կամ ամբողջությամբ մերժվել է, թողնվել է առանց քննության, գործի վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքով կամ հայցի ապահովման միջոցը վերացվել է սույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով»:

Երկրորդ գլխի «Հայցի նախնական ապահովման միջոցները»

վերառույթյամբ չորրորդ պարագրաֆում հեղինակը անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համար նոր՝ հայցի նախնական ապահովման հարցին: Վերլուծելով հայցի նախնական ապահովման միջոցների առաջացման պատմությունը, ինչպես նաև տարբեր պետությունների օրենսդրական կարգավորումները, հեղինակը տալիս է հայցի նախնական ապահովման միջոցների սահմանումը, ներկայացնում է այդ միջոցներին բնորոշ առանձնահատկությունները: Ներկայացնելով հայցի նախնական ապահովման կիրառման մասին միջնորդության բովանդակության օրենսդրական պահանջները, ատենախոսը նկատել է, որ այդ պահանջները թերի են և անհրաժեշտ է դրանք լրացնել նաև հետևյալ պահանջներով՝ 1) տեղեկություններ՝ դիմումում որպես պարտապան նշված անձի նկատմամբ դիմողի պահանջի հիմքերի վերաբերյալ 2) հիմնավորումներ՝ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման իրավական նպատակի մասին 3) հիմնավորումներ՝ հայցի նախնական ապահովման միջոցի անհապաղ ընդունման մասին 4) նշում՝ հայցի ապահովման միջոցի մասին:

Երկրորդ գլխի <<Հայցի ապահովման հետ կապված որոշումների բողոքարկումը և կատարումը>> վերտառությամբ հինգերորդ պարագրաֆում հեղինակը անդրադարձել է հայցի ապահովման վերաբերյալ դատական ակտերի վերաքննության կազմվ բողոքարկման և հարկադիր կատարման հարցերին:

Ատենախոսը նկատել է, որ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրական նորամուծություններից է հայցի ապահովման դատական ակտերի վերաքննության կարգով բողոքարկման հնարավորությունը, միևնույն ժամանակ գտնում է, որ այս հարցի լուծմանը տրված չեն ամբողջական և լիարժեք օրենսդրական կարգավորումներ: Տվյալ պնդման համար հիմք է հանդիսանում հայցի ապահովման հետ կապված որոշակի որոշումների նկատմամբ վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավական հնարավորության բացակայությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործին մասնակցող անձինք ունեն հավասար դատավարական իրավունքներ և կրում են հավասար պարտավորություններ, իրենց իրավունքների պաշտպանության համար, հեղինակը պնդում է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա պետք է լինեն հայցի ապահովման հետ կապված բոլոր դատական որոշումները:

Սույն պարագրաֆում, հեղինակը անդրադարձել է նաև հայցի ապահովման որոշումների հարկադիր կատարման ընթացքում առաջացող խնդիրներին: Մասնավորապես, հայցի ապահովման միջոցների հրատապ կիրառման համար խնդրի արդյունավետ լուծման համար առաջարկել է այն դեպքերում, երբ հայտնի է արգելադրման ենթակա գույքը, առանց կատարողական թերթը հարկադիր կատարման ուղարկելու, դատարանի որոշումը ուղարկել գույքի պետական գրանցում իրականացնող մարմին: Բացի այդ հեղինակը նկատել է, որ կատարողական վարույթին առնչվող գործող օրենսդրական կարգավորումները չեն երաշխավորում հայցի ապահովման որոշումների կատարման գաղտնիությունը, ուստի առաջարկել է կատարողական վարույթի հարուցման վերաբերյալ անձնանց ծանուցել միայն կատարողական գործողությունները կատարելուց հետո:

Երրորդ գլխում << Հայցի ապահովման առանձին միջոցների կիրառման առանձնահատկությունները << քաղաքացիական դատավարությունում>> վերտառությամբ, հեղինակը ներկայացրել է << քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցի ապահովման միջոցները առանձին-առանձին, դրանց դասակարգումը ըստ տարբեր չափանիշների:

Երրորդ գլխի առաջին <<Հայցի ապահովման միջոցների տեսակները << քաղաքացիական դատավարությունում>> վերտառությամբ պարագրաֆում, հեղինակը անդրադարձել է հայցի ապահովման միջոցներին և դրանց դասակարգման խնդրին: Այսպես, հեղինակը նկատել է, որ << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հայցի ապահովման միջոցները ըստ էության նույնական են և խելամիտ կլինի դրանք միացնել մեկ կետում և այն սահմանել հետևյալ կեպ. պատասխանողին կամ այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի

գործողությունների կատարումն արգելելը: Իսկ ինչ վերաբերում է նույն օրենսգրքի 129-րդ 1-ին մասի հոդվածի 5-րդ կետով նախատեսված՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում՝ գույքի իրացման կասեցմանը, ապա այն ավելորդ է համարում, քանի որ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում գույքի իրացումը հարկադիր կատարողի կողմից պարտադիր կասեցվում է <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> << օրենքի 45-րդ հոդվածի ուժով: Փոխարենը, ատենախոսը, առաջարկում է լրացնել օրենսգրքով նախատեսված հայցի ապահովման միջոցները նորով՝ վիճելի գույքը հայցվորին կամ այլ անձի պահատվությանը հանձնելը (դատական սեկվեստր): Ատենախոսը նշված պարագրաֆում անդրադարձել է նաև դատավարագիտության մեջ ընդունված հայցի ապահովման միջոցների դասակարգմանը ըստ տարբեր չափանիշների:

Երրորդ գլխի երկրորդ <<Պատասխանողին պատկանող կամ նրա մոտ գտնվող գույքի վրա արգելանք դնելը>> վերտառությամբ պարագրաֆում հեղինակը անդրադարձել է արգելանքի՝ որպես հայցի ապահովման միջոցի, հասկացությանը, արգելանքի առանձին տարրերին՝ գույքագրմանը, գույքի օգտագործման իրավունքի սահմանափակմանը, գույքն առգրավելուն և ի պահ հանձնելուն:

Երրորդ գլխի երրորդ <<Պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել արգելելը և պարտավորեցնելը>> վերտառությամբ պարագրաֆում ատենախոսը անդրադարձել է << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հայցի ապահովման միջոցներին:

Եզրակացության մեջ ամփոփվում են կատարված հետազոտության արդյունքները, որենք ներկայացված են ստորև.

1. Հայցի ապահովումը գործին մասնակցող անձի կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի նախաձեռնությամբ կիրառվող օրենքով նախատեսված դատավարական միջոց կամ միջոցների համակցություն է, որի նպատակն է ապահովել գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտի կատարումը: Այս սահմանումը առաջարկել ենք ամրագրել << քաղաքացիական դատավարության օրենսգրքում:
2. Հայցի ապահովումը կարող է կիրառվել << քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ցանկացած վարույթի, այդ թվում՝ նաև հատուկ վարույթի շրջանակներում:
3. Հայցի ապահովման կիրառման համար անհրաժեշտ նախապայմաններն են՝ դիմողի իրավասությունը հայցի ապահովման միջնորդությամբ հանդես գալու համար, հայցի ապահովման կիրառման համար անհրաժեշտ իրավական հիմքերի առկայությունը, այդ հիմքերի առկայության ապացուցումը, համաչափության սկզբունքի, ինչպես նաև միջնորդություն ներկայացնելու ընթացակարգային կանոնների պահպանումը:

4. Հայցի ապահովման միջնորդություն ներկայացնելու իրավունք անձը պետք է ունենա ոչ միայն առաջին ատյանի դատարանում քննության ժամանակ, այլ նաև վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում:
5. Գործող օրենսդրությունը չի նախատեսում հակընդդեմ ապահովման չափի վերաբերյալ սահմանումներ, ուստի անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել այն: Առաջարկվել է «Հ քաղ. դատ. օր. 135-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ նախադասությամբ՝ հակընդդեմ ապահովման չափը որոշելիս դատարանը գնահատում է հայցի ապահովմամբ պատճառվող հնարավոր վնասների չափը, որը չի կարող պակաս լինել հայցագնի կեսից, իսկ ոչ գույքային պահանջներով՝ նվազագույն աշխատավարձի հիմնապատկից:
6. Անհրաժեշտ է հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավական հիմքերը լրացնել և նախատեսել այդպիսի հայց ներկայացնելու իրավունք նաև այն դեպքում, երբ հայցի ապահովման միջոցը վերացվել է «Հ քաղ. դատ. օր. 134-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով:
7. Դատավարության կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների կենսագործման անհրաժեշտությունից ելնելով, անհրաժեշտ է ամրագրել հայցի ապահովման հետ կապված առաջին ատյանի դատարանի կողմից կայացված բոլոր որոշումների վերաքննության կարգով բողոքարկման հնարավորությունը:

Հավելվածում ներկայացված է ուսումնասիրության արդյունքում առաջարկված օրենսդրական առաջարկները որպես «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» «Հ օրենքի նախագիծ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվել են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ գիտական հոդվածներում.

1. Лусине Саргсян. Проблемы исполнения определений суда об обеспечении иска в Республике Армения // Արդարադատություն, Երևան, 2017, N5 (40), էջեր 90-93:
2. Լուսինե Սարգսյան Հայցի ապահովման ինստիտուտի կիրառման տեսագործական հիմնահարցերը «Հ քաղաքացիական դատավարությունում // Օրինականություն, Երևան, 2017, N5, էջեր 71-74:
3. Լուսինե Սարգսյան Գործին մասնակցող անձի իրավունքների և օրինական շահերի դատավարական պաշտպանության միջոցները դատարանի կողմից հայցի ապահովում կիրառելիս // Հանրային կառավարում, 2017, N5, էջեր 148-155:
4. Լուսինե Սարգսյան «Հ քաղաքացիական դատավարությունում հայցի ապահովման միջնորդությամբ հանդես գալու իրավունք ունեցող անձանց շրջանակը // Արդարադատություն, 2018, N5 (46), էջեր 47-51:

5. Լուսինե Սարգսյան Հայցի ապահովման տեսակները ՀՀ քաղաքացիական դատավարությունում // Օրինականություն, 2021, N 124, էջեր 46-50:
6. Լուսինե Սարգսյան Հայցի նախնական ապահովման միջոցները // Օրինականություն, ք. Երևան, 2021թ., № 126, էջ 23-28:
7. Լուսինե Սարգսյան Հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հիմնահարցերը ՀՀ քաղաքացիական դատավարությունում // «Արդարադատություն», ք. Երևան, 2021թ., № 3 (55), էջ 13-19:

САРГСЯН ЛУСИНЕ ВОЛОДЯЕВНА

АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ОБЕСПЕЧЕНИЯ ИСКА В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССУАЛЬНОМ ПРАВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Кандидатская диссертация посвящена институту обеспечения иска в гражданском процессе Республики Армения. Институт обеспечения иска имеет большое значение среди процессуально-правовых средств защиты в суде, предусмотренных гражданско-процессуальным законодательством, так как его целью является полное восстановление нарушенных прав граждан и юридических лиц, путем гарантирования фактического исполнения окончательного судебного решения по гражданскому делу.

Актуальность исследования обусловлена отсутствием в Республике Армения исследовательской работы, посвященной институту обеспечения иска и единообразной судебной практики по вопросам применения судами мер обеспечения иска.

Целью диссертационного исследования является изучение теоретико-практических вопросов, связанных с институтом обеспечения иска в гражданском судопроизводстве РА. Исходя из поставленных целей в диссертации были рассмотрены вопросы определения обеспечения иска, раскрыты предмет и цели обеспечения иска, представлена история развития данного института в законодательствах разных государств, проанализированы основания применения судами мер обеспечения иска, встречного обеспечения, вопросы их принудительного исполнения, замены и отмены обеспечения иска, также возмещения убытков, причиненных обеспечением иска и т.д.

На основании научного анализа, автором были сделаны ряд предложений, направленных на совершенствование законодательных норм, регулирующих обеспечение иска.

Научная новизна диссертации – это комплексное всестороннее научное исследование вопросов института обеспечения иска в гражданском процессуальном праве Республики Армения. Научная новизна диссертации отражена также в представленных на защиту положениях и в предложениях, представленных в заключении.

В рамках данного исследования автор предложил на законодательном уровне дать определение обеспечению иска, а также переместить главу, регулиющую обеспечение иска из раздела <<Исковое производство>> в раздел <<Основные положения>>, учитывая то обстоятельство, что применение обеспечения иска возможно не только в исковом, но и в особом производстве. Автор считает, что

применение обеспечения иска возможно не только в суде первой инстанции, но и также на стадиях обжалования решения судов первой инстанции.

Основная задача, возникающая при применении средств обеспечения иска – это обеспечение сбалансирования и равенства прав и законных интересов лиц, участвующих в деле. Применение мер обеспечения иска, безусловно, ведет к ограничению прав лиц, к которому они применяются, поэтому применение данных мер должно осуществляться только при наличии соответствующих правовых оснований. По мнению автора, при рассмотрении ходатайств об обеспечении иска, суды должны обратить внимание на наличие следующих пять необходимых условий: правомочие заявителя на подачу ходатайства о применении мер обеспечения иска, правовые основания для применения обеспечения иска, доказывание наличия этих правовых оснований, соблюдение процессуального порядка подачи заявления о применении обеспечения иска и соразмерность примененных мер к предъявленному требованию и целям обеспечения иска, При оценке доказательств, подтверждающих наличие правовых оснований обеспечения иска, суд должен руководствоваться презумпцией недобросовестности лица, в отношении которого применяются меры обеспечения иска.

Автором детально рассмотрены вопросы применения предварительных обеспечительных мер, что является новеллой Гражданского процессуального кодекса РА, вступившего в силу 9 апреля 2018 года. На основании проделанного анализа, автором были предложены изменения в нормах, регулирующих предварительные обеспечительные меры, в частности конкретизированы требования к заявлению о применении предварительных обеспечительных мер и основания отказа в применении.

В диссертации представлена и проанализирована судебная практика судов Республики Армения, касающаяся вопросов обеспечения иска. Анализ судебной практики Республики Армения показал отсутствие единых подходов судов к рассмотрению заявлений об обеспечении иска, что в свою очередь связано с пробелами в законодательстве. В гражданский процессуальный кодекс РА неоднократно вносились разные поправки, в том числе и в нормах, регулирующих обеспечение иска. Новый Гражданский процессуальный кодекс РА достаточно полно регулирует институт обеспечения иска, но эти изменения также не решили все ранее существовавшие проблемные вопросы. Сделанные в рамках данного исследования предложения могут способствовать формированию единой судебной практики по вопросам применения обеспечения иска, а также совершенствованию законодательства в этой области.

Диссертация имеет также важное теоретическое значение, так как сформулированные в ней выводы и рекомендации, позволяют решить ряд нераскрытых или малоизученных вопросов теории гражданского процессуального

права, в частности, о правовой природе института обеспечения иска, основаниях его применения, критериях классификации мер обеспечения иска, и т.д.

Научно-практические предложения и выводы направлены на углубление и расширение теоретических знаний об институте обеспечения иска и могут быть использованы в разных научных исследованиях и законотворческой деятельности.

Диссертация состоит из введения, трех глав, одиннадцати параграфов, заключения, приложения, списка использованной литературы.

Научные результаты исследования представлены на научных конференциях, отражены в семи опубликованных научных статьях и представлены в виде законопроекта в Национальном Собрании Республики Армения.

LUSINE VOLODYA SARGSYAN

TOPICAL ISSUES OF SECURING A CLAIM IN THE CIVIL PROCEDURAL LAW OF THE REPUBLIC OF ARMENIA

SUMMARY

The present dissertation is devoted to the Institute of securing a claim in the civil procedure of the Republic of Armenia. The institute of securing a claim is of great importance among the procedural and legal remedies in court, envisaged by the civil and procedural legislation, since it aims at completely restoring the violated rights of citizens and legal entities by means of guaranteeing the actual enforcement of the final court decision in a civil case.

The topicality of the research is determined by the fact that in the Republic of Armenia there is no research work, which is devoted to the Institute securing a claim and uniform judicial practice on the issued concerning application of measures of securing a claim by courts.

The aim of the research is to study theoretical and practical issues related to the institute of securing a claim in civil proceedings of the Republic of Armenia. Based on the aim set in the paper, the issues on defining the claim security are touched upon, the subject and objectives of the claim security are revealed, the history of the development of this institute in the legislations of different states is presented, the grounds for applying measures of securing a claim by courts, counter-provision are analyzed, issues of their enforcement, replacement and cancellation of securing a claim, as well as compensation for damages caused by securing a claim were discussed.

Based on the scientific analysis, a number of suggestions, aimed at improving legislative norms regulating securing a claim are brought forward by the author.

The scientific novelty of the research is a comprehensive scientific study of the issues of the institute of securing a claim in the civil procedural law of the Republic of Armenia. The scientific novelty of the dissertation is also reflected in the thesis provisions submitted for defense and in the proposals presented in the conclusion.

Within the framework of this study, the author proposes to define the notion of securing a claim on the legislative level, and also to move the chapter regulating the security of the claim from section <<Claim Proceedings>> to the section <<Main Provisions >>, taking into account the fact that the application of the claim security is possible not only in the claim proceedings, but also in special ones. The author considers that the application of securing a claim is possible not only in the Courts of First Instance but also at the stages of appealing court decisions of the Courts of First Instance.

The main task that arises when applying measures to secure a claim is to ensure the balance and equality of the rights and legitimate interests of the people involved in the case.

The application of measures to secure the claim, of course, leads to restricting the rights of the people to whom they are applied, therefore, the application of these measures should be carried out only if there are appropriate legal grounds. According to the author, when considering petitions for securing a claim, the courts should pay attention to the presence of the following five necessary conditions: the right of the applicant to file a petition for the application of measures to secure the claim, the legal grounds for the application of securing the claim, proving the existence of these legal grounds, compliance with the procedural order for filing an application for securing the claim and the proportionality of the applied measures to the specified demands and aims of the claim security. When assessing the evidence confirming the existence of legal grounds for securing the claim, the court should be guided by the presumption of a person's unfairness against whom the measures of securing the claim are applied.

The author considers in detail the issues of the application of preliminary securing measures, which is a novelty in the Civil Procedure Code of the Republic of Armenia which entered into force on April 9 2018.

Based on the carried out analysis, the author proposes changes in the norms, regulating preliminary securing measures, particularly the requirements for the application of preliminary securing measures and the grounds for refusal are specified.

The dissertation presents and analyzes the judicial practice of the courts of the Republic of Armenia concerning the issues of securing a claim. The analysis of the judicial practice of the Republic of Armenia reveals the absence of unified approaches of the courts to the consideration of applications for securing a claim, which in turn is associated with gaps in legislation. Various amendments have been repeatedly made in the RA Civil Procedure Code, and in the norms regulating securing of a claim. The new Civil Procedure Code of the Republic of Armenia quite fully regulates the institution of securing a claim, but these changes have not solved all the previously existing problematic issues either. The proposals made in this study can contribute to the formation of a unified judicial practice on the issues of the claim security application, as well as to the improvement of legislation in this area.

The research is also of great theoretical significance, since the conclusions and recommendations formulated in it enable to solve a number of unclear or poorly studied questions about the theory of civil procedural law, in particular, about the legal nature of the institution of securing a claim, the grounds for its application, criteria for classifying measures of securing a claim, etc.

Scientific and practical proposals and conclusions are directed at deepening and expanding theoretical knowledge about the institute of securing a claim and they can be used in various scientific research and law-making activities.

The dissertation consists of an introduction, three chapters, eleven paragraphs, a conclusion, an appendix, and references.

The scientific results of the research are presented in scientific conferences, they are reflected in seven published scientific articles and presented in the form of a bill in the National Assembly of the Republic of Armenia.

A handwritten signature in blue ink, appearing to be 'M. H. H.', is centered on the page.